

Լանջանիստ բնակավայր

Մակերես՝ 35.15կմ²

Բնակչություն՝ 230

Մարզկենտրոնից գտնվում է 43 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գաղիլի, Խդըրլի, Կաղիլի, Կատրլու, Ղադրլու անվանումները Լանջանիստ է վերանվանվել 1968թ-ին: Սա նախկինում եղել է Երևանի նահանգի Երևանի գավառի մեջ: Գյուղից հյուսիս ընկած է հին ավերված եկեղեցու մնացորդներ:

Գյուղը գտնվում է Կատարասարի լեռների լանջին՝ բարձրադիր վայրում, ունի առողջարար կլիմա: Տեղադրված է ծովի մակարդակից 1815մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է : Ձմեռը տևական է, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -8-ից -12 աստիճան, հուլիսյան միջինը՝ 15-ից 18 աստիճան : Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններն են:

Ագրոկլիմայական տեսակետից ընկած է մասնակի ոռոգման գոտում:

1831 թ-ին ունեցել է 45, 1897 թ-ին՝ 588, 1939 թ-ին՝ 604, 1959 թ-ին՝ 362, 1970 թ-ին է 263 հայ բանկիչ: Բնակչության մի մասի նախնիները գաղթել են Պարսկահայստանի Ղարադաղի գավառից, իսկ ավելի ուշ՝ Եղեգնաձորի շրջանից: Ըստ 2005 թ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների գյուղի բնակչության թիվը կազմել է 142 մարդ է: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 39%, աշխատունակները՝ 48%, հետաշխատունակները՝ 13%: Գյուղն ունի առկա 70 տնտեսություն:

Ըստ 2010 թ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների գյուղի բնակչության թիվը կազմել է 230 մարդ է: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 48%, կանայք՝ 52%: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 35%, աշխատունակները՝ 50%, հետաշխատունակները՝ 15%: Գյուղն ունի առկա 115 տնտեսություն:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսակն նշանակության հողերը կազմում են շուրջ 1489 հա:

Պահուստային հողերը օգտագործվում են հիմնականում որպես արոտավայրեր՝ 1300հա: Չբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Արդյունաբերություն չունի:

Հիմնախնդիրների մեջ կարևորվում է դպրոցի , մանկապարտեզի , բուժկետի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: